

ԳԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ**ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ****Տ. ՍՈՒՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ ԴԱԶԱՐԵԱՆԻ**

Աւագանի անունով Աշոտ, ծնած է 27 Յունիս, 1992-ին, Հայաստանի Ստեփանաւան քաղաքին մէջ: Զաւակն է Վարդան եւ Արմինէ Ղազարեաններու:

1999-2009 թթ. նախնական կրթութիւնը ստացած է Ստեփանաւանի Յովհաննէս Թումանեանի անուան թիւ 3 Միջնակարգ դպրոցին մէջ:

2002-2006 թթ. ուսանած է Ստեփանաւանի թիւ 1 Արուեստի դպրոցի կերպարուեստի բաժինը:

2003-2009 թթ. ծառայած է Ստեփանաւանի Սուրբ Սարգիս եկեղեցոյ մէջ, որպէս մանկապատանեկան ծխական երգչախումբի անդամ:

2009-2016 թթ. ուսանած եւ աւարտած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարանը եւ Ընծայարանը:

2011-ի Մարտ 1-ին ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեանի, ստացած է Դպրութեան չորս աստիճաններ:

2016-ին ձեռամբ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի՝ ձեռնադրուած է Սարկաւագ:

2016-2024 թթ. եղած է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի քարտուղար եւ հսկիչ՝ համատեղ դասաւանդելով «Հին Ուխտ», «Եբրայերէն սկսնակներու համար», «Վարք Սրբոց» եւ «Երուսաղէմի Պատմութիւն» առարկաները:

2020-2022 թթ. ուսանած եւ աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Սփիւռքագիտութեան ֆակուլտետի մագիստրատուրան:

2020 թուականէն մինչ օրս կը կազմէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Եկեղեցական օրացոյցը, ինչպէս նաեւ Հ.Ե.Մ., Հ.Մ.Ը.Մ. եւ Ե.Հ.Բ.Մ միութիւններու տարեկան օրացոյցները:

2021 թուականէն ցայսօր Փոխտեսուչն է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի:

2024-ի Օգոստոս 11-ին, ձեռամբ Լուսարարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի ձեռնադրուած է ամուսնացեալ քահանայ՝ վերակոչուելով Տ. Սուրէն Քահանայ: